

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

07.06.2016 15:39




Հունիսի 7-ին ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագիրը ստորագրել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհավորել է երկու իրավապաշտպան կառույցներին հուշագրի ստորագրմամբ որակական նոր հարթակի վրա դրված համագործակցության առթիվ: Անդրադառնալով Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին՝ նա համագործակցության համար առանձնացրել է ՄԻՊ-ի լիազորությունների այն շրջանակը, համաձայն որի Մարդու իրավունքների պաշտպանն անարգել կարող է այցելել զորամիավորումներ, ծերբակաման վայրեր, նախնական կալանք ու քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ: Պալատի նախագահը կարևորել է նաև այն, որ ՄԻՊ-ը կարող է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան ներկայացնել օրենքների նորմերի սահմանադրականությանն առնչվող դիմումներ: Նա հիշեցրել է, որ քաղաքացին կարող է ՄԻՊ դիմել, եթե սպառում է ներպետական երեք ատյանները՝ հավելելով, որ այս տեսանկյունից հուշագրով ամրագրված համագործակցությունը նպաստելու է Մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր գործին: Արա Զոհրաբյանը նաև խոսել է փաստաբանների կողմից բարձրաձայնվող՝ սահմանափակված վայրերում Մարդու իրավունքները խախտելու, նաև խոշտանգման դեպքերից: Նա շեշտել է, որ այդ պարագայում փաստաբանները հնարավորություն կունենան ՄԻՊ դիմելու միջոցով արագ արձագանքման խմբով արձանագրել նմանատիպ դեպքերը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, շնորհավորել է ներկաներին հուշագրի ստորագրման կապակցությամբ՝ նշելով, որ այն նոր որակ է բերելու Պալատի հետ համագործակցությանը: Նա ընդգծել է, որ ի տարբերություն սովորական հուշագրերի, այս հուշագիրը ցանկությունների ամբողջությունն է, այլ՝ համագործակցության կոնկրետ մեխանիզմների ներդրում: Պաշտպանն ասել է, որ Փաստաբանները մեր երկրի ժողովրդավարական ինստիտուտների կարևոր տարրերից են: Նա նշել է, որ փաստաբաններն առանձին գործերով իրավաբանական օգնություն ցուցաբերելիս՝ բախվում են խնդիրների, որոնք Մարդու իրավունքների պաշտպանի հետաքրքրության տիրույթում են: Առանձնացնելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար հուշագրում առկա առաջնահերթությունները՝ Արման Թաթոյանը կարևորել է Փաստաբանական դպրոցում ունկնդիրների համար ՄԻՊ աշխատակազմի կողմից դասընթացներ վարելու հնարավորությունը, ինչը թույլ է տալու ՄԻՊ-ին ավելի ակտիվ ու լիարժեք ինտեգրվել իրավապաշտպան հանրության ոլորտ:

Հուշագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից:

Բեռնել հուշագրի տեքստը:







Վերադառնալ `$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })`